

ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ  
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ա. Ս. ՂԱԶԻՅԱՆ

Ռուս-պարսկական պատերազմների շրջանից մեզ հասած բանահյուսական ստեղծագործությունները տարբեր բնույթի են՝ երգեր, ավանդություններ, պատմական դրույցներ։ Այս ստեղծագործությունների գաղափարական հիմքը հայրենասիրությունն է։ Ռուս-պարսկական պատերազմների հետ առնչվող բանահյուսական ստեղծագործությունները մի նոր բանահյուսական կերպար են ներկայացնում։ Դա Ռուսաստանն է, որը հանդես է գալիս հանձին իր քաղաքական ու ռազմական գործիչներին։ Մինչ այդ հայ բանահյուսության մեջ չի եղել մի այլազգի գործիչ կամ պետություն, որը կրեր Հայաստանի և հայ ժողովրդի պաշտպանի գաղափարը։ Այս տեսակետից քննարկվող ստեղծագործությունները նորություն են հայ բանահյուսության մեջ։

XVIII դարում և XIX դարի առաջին երեսնամյակում ռուսական զենքի հաջողության համար մարտնչած բազմաթիվ հայ հերոսների անուններ են մնացել թե՛ ժողովրդի հիշողության մեջ, թե՛ գրավոր աղբյուրներում։ Ղարաբաղից Վանի Աթաբեկյան, Ռոստոմ-բեկ Մելիք-Բեգլարյան, Հաթայի, «Վերքի» հերոս, քանաքեռցի Աղասի, պարսկական բանակի թնդանոթաձիգ Հակոբ Հարությունյան, Ղաղարապատ գյուղի հիմնադիր Դավի Ղաղար, համամլվեցի Մանուշակ, շամշադինցի Գրիգոր Մանուշարյան, բյուրականցի Հովհաննես Ասլանյան, երևանցի Աստվածատուր և շատ ուրիշներ<sup>1</sup>։

Ժողովուրդն անտարբեր չի եղել հայրենիքին կյանքը նվիրաբերած հերոսների նկատմամբ։ Հյուսվել ու կենցաղավարել են ստեղծագործություններ, որոնք փառաբանել են նրանց գործերը։ Այս առումով հետաքրքիր օրինակ է «Տաղ ի Ռոստոմ-բեկ» երգը, որն անցյալ դարում ունեցել է մի քանի հրատարակություններ<sup>2</sup>, բանավոր ավանդույթով կենդանի է եղել պարսկահայոց մեջ մինչև XIX դարի վերջերը<sup>3</sup>։

«Տաղ ի Ռոստոմ-բեկ» վիպական-հերոսական երգը հորինվել է XIX դարի սկզբին, Թավրիզում։ Ըստ որոշ բանասերների (Սևան Հովհաննիսյան, Բաֆֆի) երգի հեղինակն ինքը երգի հերոսն է։ Ռաֆֆին դրում է այս կապակցությամբ. «Երևում է, Ղարաբաղի հերոսը որքան հաջողակ էր զենք գործ

<sup>1</sup> Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 280—305; «Հայ ժողովրդի պատմություն», հատ. V, Երևան, 1974, էջ 126—165; Վ. Բեգլարյան, Ռուս և անգրիկական ժողովուրդների փոխօգնությունը 1826 թ., «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 4, էջ 128—135։

<sup>2</sup> «Բաղմալեղ», 1847, № 3, էջ 40; Գամառ-Քաթիպա, Ազգային երգարան, 1856, ՈՊԲ, էջ 115—116; Մ. Միասարյան, Քնար հայկական, ՈՊԲ, 1868, էջ 505—506; Բաֆֆի, Խամոռյի մելիքությունները, Երկերի ժողովածու, հատ. 10, Երևան, 1964, էջ 295—296; «Ազգադրական հանդես», գիրք 5, էջ 247։

<sup>3</sup> «Кавказская старина» (журнал), 1872, № 2, էջ 38։

ածելու մեջ, նույնքան հմուտ էր և բանաստեղծության մեջ»<sup>4</sup>։ Ավելի հավանական է «Բաղմավեպում» արտահայտված կարծիքը, ըստ որի երգի հեղինակը Դանիել կաթողիկոսն է, որն իր ռուսասիրության համար Թավրիզ էր աքսորված և հաճախ բանտում այցելում էր Լ. Երգի հերոսին՝ Ռոստոմ-բեկին։ «Բաղմավեպը», հրատարակելով «Տաղը», գրում է. «Աղգային ռամկական երգերուն մեջ անոնք ավելի հարգի ու ախորժելի են, որոնք որ պատմական հիշատակ մըն ալ ունին հետերնին. ասոնցմէ մեկն ալ Ռոստոմ բեկին Լ. Երգն է»<sup>5</sup>։ Ի՞նչ պատմական հիշատակներ է պարունակում «Տաղ ի Ռոստոմ-բեկ» երգը և ինչու էր երգի հերոս Ռոստոմ-բեկը գտնվում Թավրիզի բանտում։

1804 թ. ռուսական բանակը Ֆիցիանովի հրամանատարությամբ մտնում է Արարատյան դաշտ՝ պարսիկներից Նրևանի բերդը հրավելու նպատակով և ճամբար է դնում էջմիածնի մոտ։ Աբբաս-Միրզան պարսից զորքի գլուխն անցած պաշարում է ռուսական բանակի թիկունքը, զրկում նրան պարենից ու զինամթերքից։ Ահա այս ժամանակ ռուսական զորքին օգնության է գալիս Ղարաբաղի Մելիք-Բեգլարյան Մելիք Աբով 11-ի անդրանիկ որդին՝ Ռոստոմ-բեկը, 25-ամյա մի երիտասարդ, որը կամավոր ծառայություն էր կատարում ռուսական բանակում։ Երկու անգամ Ռոստոմ-բեկին իր հեծյալ ջոկատով ու ռուս փոքրաթիվ զինվորներով հաջողվում է ձեղքել պաշարման շղթան. երրորդ անգամ, Փամբակի Ղաթսալու դուղի մոտ, նա պաշարվում է պարսից անհամեմատ մեծաքանակ մի զորախմբի կողմից։ Մարտի ժամանակ ծանր վիրավորված Ռոստոմ-բեկին դերում են և իբրև նվեր ուղարկում Թավրիզ, Աբբաս-Միրզային։ Ռոստոմ-բեկը, մերժելով Աբբաս-Միրզայի առաջարկը հավատափոխ լինելու մասին, Թավրիզի բանտում տանջամահ է արվում։ «Թավրիզի հայերը մեծ սուգով նրա մարմինը թաղեցին իրենց եկեղեցու բակում՝ գտնվող գերեզմանատնում և սովորեցրին իրանց զավակներին երգել մի երգ, որ ինքը երիտասարդը գրել էր բանտում եղած ժամանակ»<sup>6</sup>։

«Տաղ ի Ռոստոմ-բեկը», որ հորինված է առաջին դեմքով, մի քաջ, հայրենասեր ու անձնվեր զինվորականի դառը խոհերի, հայրենիքի նկատմամբ ունեցած մտահոգությունների մասին է։ Նույնիսկ այն դժնդակ պայմաններում, որ գտնվում էր հերոսը, նրան հանգիստ չի տալիս հայրենիքի ճակատագիրը, նա չի կորցնում հոգու արիությունը, չի ընկճվում, մահն ընդունում է իբրև հերոս։ Երգը իր գաղափարական բովանդակությամբ առնչվում է հայ վիպական բանահյուսությանը, իսկ հերոսը հանդիսանում է Վասակ, Մուշեղ, Մանվել Մամիկոնյանների գաղափարական ավանդների կրողը նոր ժամանակներում։

Սէր հայրենեաց ի թշնամեաց ձեռս մատնեաց,—ուրախ մեռայց,  
նվ դասեցայց ընդ դուցազանց իմոց նախնեաց»<sup>7</sup>։

Ռոստոմ-բեկի համար էլ իմացյալ մահը անմահություն է, սակայն ցանկալի չէ մահն ընդունել դահճի ձեռքից, այլ ինչպես վայել է քաջին՝ պատերազմի դաշտում։

<sup>4</sup> Ր ա ֆ ֆ ի, նշվ. աշխ., էջ 295։

<sup>5</sup> «Բաղմավեպ», 1847, № 3, էջ 39։

<sup>6</sup> Ր ա ֆ ֆ ի, նշվ. աշխ., էջ 295։ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. V, էջ 127։

<sup>7</sup> «Բաղմավեպ», 1847, № 3, էջ 39։ Ր ա ֆ ֆ ի, նշվ. աշխ., էջ 295։

<sup>8</sup> Նույն տեղում։



Թէպէտ ցաւիմ զի շմեռանիմ ի մարտ ընդդէմ թշնամեաց իմ,  
Այլ յօժարիմ, զի զոհ լինիմ այսպէս վսեմ<sup>9</sup>։

Նա ևս չի կորցնում զինվորի իր արժանապատվութիւնն ու հպարտութիւնը նույնիսկ այն ժամանակ, երբ օրըստօրե սպասում էր մահվան։

Միայն սղամ, զի կապեալ կամ, թէ միւս անգամ հրացան, սուր իմ  
Ի ձեռս ունիմ,— զբաղուկս իմ ձեզ ցուցանեմ<sup>10</sup>։

Հետագա սերունդներին օրինակ ու խրախույս լինելու համար է խնդրում երգի հերոսը։

Մի՛ մոռասցիք պատմել և զայս յորդոց յորդի,  
Թէ քաջն Ռոստոմ վասն հայրենեաց ի սպանդ վարի<sup>11</sup>։

Երևանի բերդի առումը ռուսական հաղթական բանակի կողմից 1827 թ. հոկտեմբերի 1-ին հայ ժողովրդի լայն շրջաններում դիտվեց իբրև աղա-տագրում պարսկական լծից և ողևորությամբ ու ցնծությամբ համակեց հայ ժողովրդին։ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին» այդ ժամանակաշրջանում իշխող տրամադրութիւնների ամենահավաստի աղբյուրն է։ Աբովյանը «Վերքում» վկայում է, որ ռուսական զորքի հաղթանակները ծնունդ էին տվել ժողովրդական երգերի։ Իբրեւով երգի մի նմուշ՝ «Սար ու ձոր սասանմիշ էլան, զարմացան» սկզբնատողով, նա գրում է. «Հարիր տեսակ խաղ հայերեն, թուրքերեն, Երևանու բաղերն ու ձորերը լսում էին ու հինդ տարեկան էրեխեն էլ էսօր ուրախ վախտը ձեռը բերնին ա դնում ու ասում»<sup>12</sup>։

Նույն բանն է հաստատում ռուս ռազմական պատմաբանը. «Իսկ ռուսաց զորքի գործերն ու գեներալների սխրագործութիւնները փառաբանվում էին ժողովրդական երգերում»<sup>13</sup>։ Իացի «Վերքում» հիշատակված «Սար ու ձոր սասանմիշ էլան, զարմացան» սկզբնատողով երգից, Աբովյանը, ի թիվս այլևայլ բանահյուսական նյութերի, դրի է առել մի թուրքերեն երգ, որը ներկայացված է «Հայ աշուղ Սեֆի Յուսուֆի ասած երգը Երևանի առման մասին» վերնագրով և կից հայերեն թարգմանությամբ։

Աբովյանի միջոցով մեզ հասած վերոհիշյալ երկու երգն էլ պատմական երդեր են, նվիրված 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի դրվագներին։ Դրանք գովքի երգեր են, ուր փառաբանվում ու մեծարվում են ռուսաց զորքի հաղթանակները, ռուս և հայազգի զորապետների քաջագործութիւնները, ռուսական զորքին օգնող հայ գործիչները։ Իբրև պատմական երգեր, դրանք հավաստիորեն են ներկայացնում ժամանակաշրջանի ոգին, վերաբերմունքը դեպի Ռուսաստանի ազատագրական առաքելութիւնը Անդրկովկասի, մասնավորապես հայ ժողովրդի նկատմամբ։

<sup>9</sup> Նույն տեղում։

<sup>10</sup> Նույն տեղում։

<sup>11</sup> Նույն տեղում։

<sup>12</sup> Խ. Աբովյան, Երկեր, հատ. 3, Երևան, 1948, էջ 177։

<sup>13</sup> В. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т. IV, вып. IV, СПб, 1888, էջ 485։

«Սար ու ձոր սասանմիշ էլան, դարմադան» երգը հորինված է արարատյան բարբառով: Երգում պատերազմական դործողությունները հիշատակվում են իբրև ոչ հեռու անցյալում վերջացած իրողություններ. յուրաքանչյուր դրվագ ներկայացվում է ընդհանուր գծերով՝ մեկական տողի միջոցով.

Մատաթովն Ղարսբաղ առավ՝ աղատեց,  
Կրասովսկին Արարատն ոտնատակ տվեց,  
Սաղ Իրանը Պասքովիչին չորեց, ծունը դրեց<sup>14</sup>:

Ընդհանուր գծերով ներկայացված են ռազմական գործողությունների վայրերը՝ Ղարաբաղ, Աղարան, Իրան, ռազմական դործիչների անունները՝ Պասկևիչը, Մադաթովը, Կրասովսկին, Ներսես արքեպիսկոպոսը, Շահադեն (Աբբաս-Միրզան) և այլք: Սիմվոլիկ ձևով է երգը արձագանքում Ռուսաստանի հաղթանակին.

Ասլանի գլուխն արծվին Ռուսն մատաղ արեց<sup>15</sup>:

Ասլանը՝ առյուծը, Պարսկաստանի ղինանշանն էր, իսկ արծիվը՝ ռուսական կայսրության:

Աբովյանի գրի առած երկու երգում էլ մեծ տեղ է հատկացված հավատին և հայ եկեղեցու նշանավոր գործիչներ Ներսես արքեպիսկոպոսին ու Եփրեմ կաթողիկոսին:

Սրբազան Ներսեսի իաշին դուրբան գնամ,  
Հոգևոր Եփրեմ տիրոջն ղուլ դառնամ<sup>16</sup>:

Վիպական շափաղանցությամբ են ներկայացվում թշնամու կորուստները և սեփական հաջողությունները: Վիպական հնարանքներով թշնամին՝ Պարսկաստանը, պարսկական բանակը նսեմացվում է և ընդհակառակը՝ Ռուսաստանը փառաբանվում ու մեծարվում.

Ղզրաշն մուկ դառած, գլխին վայ տվեց.  
Բենկենդորֆն սարդարին ջախըփուրթ արեց<sup>17</sup>.  
Պասկևիչի նման սարդար ո՞վ է տեսել այս աշխարհում.  
Հաղթեց շահին, շահադային, հարստությունն ու  
ստացվածքը ոչնչացրեց<sup>18</sup>:

Երգերը տողորված են անսահման նվիրվածությամբ ու հավատարմությամբ դեպի Ռուսաստանը: Անդրկովկասում Ռուսաստանի վարած քաղաքականությունը Հայաստանի հարցում օբյեկտիվորեն համընկնում էր հայ ժողովրդի ազատագրական շահախնդրություններին, և ոգևորությունը Ռուսաստանի նկատմամբ համակել էր հայ ժողովրդի լայն շրջաններին:

Մենք քամակ-քամակի կտանք, վեր կկենանք,  
Ռսին մեր աշխարհը, կյանքն ղուրբան կտանք<sup>19</sup>:

14 Խ. Արուստյան, նշվ. աշխ., էջ 177:

15 Նույն տեղում, էջ 177—178:

16 Նույն տեղում:

17 Նույն տեղում:

18 Ի. Շահադիզ, Դիվան Խ. Արուստյանի, հատ. 1, Երևան, 1940, էջ 329:

19 Խ. Արուստյան, նշվ. աշխ., էջ 177:



Այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը վայելում էր Ռուսաստանի նման մի հզոր պետության հովանավորությունն ու պաշտպանությունը, հպարտության և ապահովվածության զգացմունքներ էր ծնում։ Այդ տրամադրությունը հատկապես ընդգծված է «Սար ու ձոր սասանմիշ էլան, դարմացան» սկզբնատողով երգի կրկնակում։

Անիրավ՝ Հայերի արինն մի խմի,  
Միտք արա՝ էս բադին բաղմանչի ունի,  
Յարալու սրտիս էդ բարը մի քցի<sup>20</sup>։

Բաղ և բաղմանչի հասկացությունները խորհրդանշում են Հայաստանը և նրա պաշտպան Ռուսաստանը։

Ռուս-պարսկական պատերազմի որոշ դրվագներին, կապված Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու հետ, արձագանքել են նաև ռուսական երգերը։ Ռադմական պատմաբան Վ. Պոտտոն գրում է, որ ռուս ղինվորները հայազգի ղեներալ Վ. Մադաթովի մասին երգեր էին հորինել ու երգում էին։ Նա բերում է մի նմուշ։

Генерал храбрый Мадатов  
Нас к победам поведет,  
Он боевые ухватки  
Перссов знает напролет<sup>21</sup>։

Մի այլ ժողովրդական երգում վիսպական գծերով է ներկայացված Պասկևիչի ռադմական գործունեությունն Անդրկովկասում։

Граф Паскевич нам говаривал:  
Постарайтесь, ребятушки,  
Уж вы храбрые солдатушки,  
Постоять за землю русскую<sup>22</sup>։

«Не туман из-за моря» կաղակային ժողովրդական երգը նվիրված է Երևանի բերդի գրավմանը, որը ներկայացված է վիսպական չափադանցություններով, իբրև մի դյուրին ռադմական գործողություն։

Крикнули, ударили,  
Понеслись на брань,  
И в минуту с четвертью  
Взяли Еревань<sup>23</sup>։

Վերը քննարկված երգերը մեզ են հասել գրավոր ավանդությամբ. գրի են առնվել ստեղծման ու կենցաղավարման ընթացքում, ժամանակակիցների

<sup>20</sup> Նույն տեղում։

<sup>21</sup> В. Потто, Кавказская война..., т. III, вып. I, СПб, 1886, էջ 133։

<sup>22</sup> «Песни казаков Кубани» (сост. И. Варрава), Краснодар, 1966, էջ 71։

<sup>23</sup> В. Чичеров, Исторические песни. Л., 1956, էջ 314։

կողմից: Երկար ժամանակ բանավոր ավանդույթով կենցաղավարել են բանահյուսական ստեղծագործություններ՝ արձակ-սլափողական ժանրի նմուշներ (ավանդություններ, զրույցներ), որոնք պահել են ռուս-սլավոնական սլափողականների հիշողությունները: Այդ ստեղծագործությունները ևս համակված են համակրանքի ու նվիրվածության զգացումներով դեպի Ռուսաստանը, ռուսական բանակը, դրական վերաբերմունքով՝ դեպի ռուս մարդիկ: Չնայած շուրջ երկդարյա բանահյուսական կյանքին և այն հանգամանքին, որ դրանց ստեղծող ժողովուրդը ճաշակել է ցարիզմի ունկնդիր քաղաքականության պտուղները, նրանցում պահպանված է ճշմարիտ հայացքը հայ ժողովրդի կյանքում Ռուսաստանի կատարած դերի վերաբերյալ:

Հիշատակության արժանի է մի ավանդույթուն, որը վերաբերում է Աղա-Մամադ խանի՝ Շուշին 1797 թ. գրավելուն և այնտեղ սպանվելուն: Հայտնի է, որ շահը խոստացել էր «սև ալգին ցողել կարմիր արյունով»՝ Ղարաբաղը ամայացնել, հատկապես Ղարաբաղցիների՝ ռուսական բանակին օգնություն ցույց տալու համար: Հայտնի է նաև, որ նա սպանվեց Սաֆարալի-բեկ անունով իր մի պալատականի ձեռքով<sup>24</sup>: Նվաճա, ըստ ավանդության, Սաֆարալի-բեկը ծագումով հայ է եղել. տեսնելով իր ազգակիցների տառապանքը, նա որոշում է նրանց ազատել բռնակալի ճիրաններից: Գիշերով Սաֆարալի-բեկը մտնում է շահի ննջարանը և դաշույնի հարվածով վերջ տալիս նրա կյանքին<sup>25</sup>: Մոտավորապես նույնն է պատմում Բաֆֆին, վկայակոչելով մի գրավոր պատմություն, որը նա կարդացել է Արցախում շրջադայությունների ժամանակ<sup>26</sup>: Հավանաբար բանավոր ավանդության և Բաֆֆու աղբյուրը նույնն է: Այստեղ կարևորը շահին սպանողի հայ լինելն է, մի հանգամանք, որ ավելի բանահյուսական գունավորում ունի, քան սլափական, և ժողովրդի իղձերի դրսևորման ձևերից մեկն է:

Ռազմական սլափաբան Վ. Պոտտոն մեծ գովեստներով է պատմում խաչենի Կուսապատ գյուղացի Վանի Յուզբաշու քաջագործությունների, ռուսաց բանակին նրա մատուցած ծառայությունների մասին<sup>27</sup>: Վանի Յուզբաշու կյանքի մի դրվագի մասին է պատմում հետևյալ ավանդական զրույցը<sup>28</sup>: Շահ-Բուլաղի ամայի բերդում գիշերով պարսիկները պաշարում են ռուսաց զորքը: Այս խմբի մեջ էր նաև Վանի Յուզբաշին իր քաջերով: Պաշարումը տևում է մի քանի օր: Վանին մի երկու անգամ ճեղքում է պաշարման շղթան. գնում հայրենի Կուսապատ, այնտեղից սլարեն բերում և փրկում ռուսական զորքին կորստից: Ի վերջո զորքին հաջողվում է ճեղքել պաշարումը: Անցքը տեղի է ունեցել 1806 թ.: Զրույցում ռուսաց զորաբանակի հրամանատար է հիշատակվում Պասկևիչը, մինչդեռ իրականում եղել է գնդապետ Կարյա-գինը<sup>29</sup>:

<sup>24</sup> Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 273:

<sup>25</sup> Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետև՝ ՀԱԻԲԱ), FFV, 4414—4416:

<sup>26</sup> Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 274:

<sup>27</sup> В. Потто, Первые добровольцы Карабаха, Тифлис, 1902.

ՀԱԻԲԱ), FFV, 4414—4416:

<sup>29</sup> Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 316: «Հայ ժողովրդի պատմություն», հատ. V, էջ 129:



Ղափանի հայ բնակչության կողմից ռուսական զորքերին ցույց տրված օգնության մասին կենցաղավարում է հետևյալ պրուցը<sup>30</sup>։ Նրբ գեներալ Մադաթովը ռուսաց զորքի գլուխն անցած մտնում է Արցախ, Ղափանի թուրք բեկերը հայ բնակչությանը ուղում են սրի մատնել, գյուղերն ավերել, որպեսզի «ռուսի թարափը» չանցնեն։ Հայերն իրենց մեկիքի գլխավորությամբ ամրանում են հայրենի բարձր ու անմատչելի լեռներում։ Մեկիքը ժողովրդից քաջ ու կովող մարդկանց ուղարկում է «երանալ» Մադաթովին օգնության, մինչև որ ռուսական բանակը վերջնական հաղթանակ է տանում։ «Ժողովուրդը շատ ուրախանում ա, որ ռուսը հաղթալ ա, զուռնա-դհոլ ածում են, ետավ ալ հավաքվում, գնում Օհանա եկեղեցին, մատաղ ու պատարագ անում, որ Մատաթով երանալը սաղ ըլի, սուրը կտրուկ»։ «էդա ռուսը հաստատվում ա մեր հողում, խաղաղություն ա ընկնում, գառնը գելի հետ ա արածում, քանդված շենքերն ալ շինում են, ասլրում բախտավոր»<sup>31</sup>։

Ռուս-պարսկական պատերազմում ռուս զինվորների ու հայերի համագործակցության մի դրվագով է բացատրվում Երևանի մոտակայքում գտնվող բլրի Մուխաննաթ-թափա անունը։ Ըստ այդ պրուցի, Երևանի բերդը ոմբակոծելու համար անհրաժեշտ է եղել մի բլուր, որը մի գիշերվա մեջ ստեղծել են ռուս զինվորներն ու տեղացի հայերն իրենց գլխարկներով բերած հողից։ Պարսիկներն այդ ձևով գոյացած բլուրը կոչել են Մուխաննաթ-թափա (նենգ բլուր)<sup>32</sup>։

Արցախի, Գանձակի շրջաններում մինչև այժմ էլ պահպանվում են բազմաթիվ տեղանուններ, որոնց ստուգաբանությունը ժողովուրդը բխեցնում է ռուսական բանակի գործողություններից (այս շրջաններում ռուսական բանակը մնացել է համեմատաբար երկար և ընդհարումներ է ունեցել պարսից զինվորական ուժերի հետ)։ Այսպես, Գյուլիստանի (Ադրբ. ՍՍՀ Շահումյանի շրջան) մոտ է գտնվում «Ռուսի ուրդ» անունով հանդամասը։ Զրույցն ասում է, որ ռուսներն այդ վայրում կովել են պարսիկների դեմ և այդ ժամանակվանից անունը մնացել է Ռուսի ուրդ<sup>33</sup>։ Մահմեդաձոր (Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ) գյուղի մոտ մինչև հիմա էլ կանգուն մի կամուրջ կա, որ կոչվում է «Ռուսեն կարմունջ»։ Ըստ ավանդության, այն ռուսաց զորքն է կառուցել<sup>34</sup>։ Լեռնային Ղարաբաղի Քարին-տակ գյուղի մոտակայքում են գտնվում Զաստավ, Բարութ-խան կոչված հանդամասերը, որոնցից առաջինում ռուսական պահակազորք է եղել, իսկ երկրորդում՝ զինամթերքի պահեստներ<sup>35</sup>։

Այսպիսով, բանահյուսական ստեղծագործությունների քննարկումը ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը, արձագանքելով իր պատմական ճակատագրի համար խոշոր նշանակություն ունեցող իրադարձություններին՝ ռուս-պարսկական պատերազմներին, ճիշտ է ընկալել Ռուսաստանի դերն ու նշանակու-

30 ՀԱԻԲԱ, FF III, 8597—8601։

31 Նույն տեղում, 8600։

32 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 30։

33 ՀԱԻԲԱ, FF VII, 6139։

34 Նույն տեղում, FF IX, 8817։

35 Նույն տեղում, 9087—9089։

թյունը Արևելյան Հայաստանը պարսկական լծից ազատագրելու գործում. մի աշխարհըմբռնում, որը ավելի խորացավ հետագայում՝ ռուս-թուրքական պատերազմների շուրջը ստեղծված բանահյուսության մեջ: Պատմության դասերը լավ յուրացրած ժողովուրդը գրսևորում է իր վերաբերմունքը հետևյալ իմաստով: «Մեր բախտը ռուսից ա կախված, ռուսի կոխած տեղին մատաղ»<sup>36</sup>:

#### ОТГОЛОСКИ РУССКО-ПЕРСИДСКИХ ВОЙН В АРМЯНСКОМ НАРОДНОМ ТВОРЧЕСТВЕ

А. С. ГАЗИЯН

(Резюме)

В русско-персидских войнах XVIII и первой трети XIX вв. принимали активное участие многие сыны армянского народа. Связывая освобождение Армении от персидского ига с победой русского оружия, они всячески способствовали победе русских войск. Отдельные военные эпизоды и деятельность военачальников русской армии, в том числе армян, нашли отражение в армянских военно-патриотических песнях, преданиях и рассказах. В них восхваляются подвиги русской армии, боевое содружество русского и армянского народов. Военные действия России в Закавказье воспринимаются как освободительные. В этих произведениях правдиво отражаются чаяния армянского народа в эпоху русско-персидских войн.

<sup>36</sup> Նույն տեղում, FF VI, 9897: